ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ա. Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

1. Ֆեոդալական հասարակության տնտեսական հիմքը հողային սեփականությունն է. դրանով են պայմանավորված այդ հասարակության արտադրական, փոխանակային և բաշխման հարաբերությունները, որոնք միասին վերցրած կազմում են ֆեոդալիզմի տնտեսական կառուցվածքը, այն իրական հիմքը, որի վրա հիմնվելով բարձրանում են պետական և իրավական ձևերը։ Ուրեմն, Հայաստանում ֆեոդալական հասարակարգի ծագման ու զարգացման ընթացքը հասկանալու համար նախ անհրաժեշտ է քննության ենթարկել ֆեոդալական հողային սեփականության ծագման հարցը՝ երբ և ինչպես է այն ծագել, զարգացման ինչ փուլեր է նա անցել։ Դրա հետ միասին պետք է նշվի, որ հին Հայաստանը իր տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացմամբ սերտորեն կապված է եղել հարևան երկրների՝ Իրանի, Բյուզանդիայի, Վրաստանի և Աղվանքի հետ և ընթացել է զարգացման նույն ճանապարհով։ Այդ նշանակում է, որ Հայաստանում ֆեոդալական հողային սեփականության ծագման և հաստատման հարցի լուսաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ նաև վերոհիշյալ երկրների պատմությունը հասկանալու համար, հատկապես եթե նկատի ունենանք այն, որ մեր աղբյուրները ֆեոդալիզմի ծագման ու զարգացման մասին պարունակում են համեմատաբար կարևոր տվյալներ։

Ստորև կփորձենք ի մի բերել մեր աղբյուրներում եղած տվյալները և որոշել ֆեոդալական հողային սեփականության ծագման և հաստատման հիմնական հարցերը։ Հոդվածում բերված փաստական տվյալները բազմիցս քննարկվել են Հայաստանի պատմությանը վերաբերող գրականության մեջ։ Փորձ է արվում այդ տվյալներին տալ նոր լուսաբանում և, որ գլխավորն է, բացահայտել դրանց ներքին կապը, դրանք դիտել պատմական զարգացման պրոցեսում։

2. Ֆեոդալիզմը Հայաստանում հարցի մասին կա բավականին գրականություն։ Նշանակալից են առանձնապես Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի, Խ. Սամվելյանի և ուրիշների ուսումնասիրությունները։ Տվյալ հարցը լայն քննության առարկա դարձավ հատկապես հետպատերազմյան տարիներին։ Ս. Երեմյանը, Աշ. Աբրահամյանը, Բ. Առաքելյանը և ուրիշ հայ պատմաբաններ, ելնելով ժամանակակից պատմական գիտության պահանջներից և վերագնահատելով կուտակված հարուստ նյութը, որոշակի արդյունքների հասան ֆեոդալիզմի ծագման պրոբլեմի դիտական լուսաբանման ասպարեզում[1]։ Ներկայումս ըն-

---

[1] *Հայաստանի ֆեոդալիզմի պատմության վերաբերյալ գրականության մանրամասն քննությունը, տե՛ս Լ. Բարայան, Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ, Երևան, 1970, էջ 27—88։*

ղունված է այն կարծիքը, որի համաձայն մեր թվականության III դարում Հայաստանում սկսվեց ստրկատիրական հարաբերությունների ճգնաժամը, իսկ IV դարում ձևավորվեցին ֆեոդալական հարաբերությունները։ Ըստ այդ տեսակետի IV դարում Հայաստանում արդեն գոյություն ունեին ֆեոդալական հողատիրության հիմնական ձևերը՝ «հայրենիք» (ալլոդ), «պարգևանք» (բենեֆիցիում) և «խոստակ» (լեն, ֆեոդ[2])։

Գոյություն ունի մի այլ տեսակետ, ըստ որի՝ «ֆեոդալական կացութաձևը ստրկատիրական հասարակության ընդերքում գոյություն ուներ շատ վաղուց, սակայն դա նոր որակ ստացավ, արտադրության հիմնական եղանակ դարձավ միայն մեր թվականության III դարում»[3]։

Մենք մտադիր չենք այստեղ կանգ առնել մեջբերված տեսակետների վրա, քննել այն փաստարկումները, որոնք առաջ են քաշում այդ տեսակետների կողմնակիցները։ Անվիճելի է միայն այն, որ մեր թվականության III—IV դարերում Հայաստանում, ինչպես և հին աշխարհի բոլոր երկրներում, ստրկատիրական հասարակությունն ապրում էր սուր ճգնաժամ և այդ մեռնող հասարակության ընդերքում արդեն ծագում ու զարգանում էին գալիք ֆեոդալական հասարակության սաղմերը։ Սակայն դրա հետ միասին ոչ մի դեպքում չպետք է մոռանալ, որ անցումը ստրկատիրական հասարակությունից ֆեոդալիզմին՝ իոր սոցիալական հեղաշրջում էր։ Ճիշտ է, այն տեղի ունեցավ խաղաղ ճանապարհով և տևեց շուրջ երեք դար, բայց դա սոցիալական հեղաշրջում էր, որի ընթացքում հանուն ֆեոդալական սեփականության զոհաբերվեց ստրկատիրական մասնավոր սեփականությունը։ «Բոլոր մինչայժմյան ռևոլյուցիաները,— գրում է Էնգելսը,— ռևոլյուցիաներ էին սեփականության մի տեսակը սեփականության մյուս տեսակի դեմ պաշտպանելու համար։ Նրանք չեն կարող սեփականության մի տեսակը պաշտպանել, առանց խախտելու մյուսը»[4]։

Մեզ թվում է, որ հին Հայաստանի պատմությանը վերաբերող գրականության մեջ անհրաժեշտ չափով ուշադրություն չի դարձվել այդ հանգամանքի վրա։ Աղբյուրների ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ Տրդատ III-ի և նրա հաջորդների օրոք Հայաստանում իրականացվել են մի շարք պետական, վարչական, եկեղեցական և հողային ռեֆորմներ, որոնք մինչև հիմա (բացի եկեղեցական ռեֆորմից) գիտական ուսումնասիրության չեն ենթարկվել։ Իսկ առանց դրա անհնարին է խորամուխ լինել ֆեոդալական հարաբերությունների ծագման ու զարգացման հարցի մեջ և տալ այդ պրոցեսի գիտական վերլուծությունը։

3. Ինչպես հայտնի է, ֆեոդալական արտադրաեղանակի առաջացման նյութական նախադրյալը խոշոր հողատիրությունն է։ Անվիճելի է նաև այն, որ III—IV դարերում հին Հայաստանում գերիշխում էր խոշոր հողատիրությունը։ Պարզության համար համառոտակի կանգ առնենք եկեղեցական խոշոր հողատիրության առաջացման վրա։

---

2 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», առաջին մաս, Երևան, 1951, էջ 76—77, 78։ Տե՛ս նաև „История СССР", т. 1, под. ред. М. В. Нечкиной, М., 1956, էջ 44։ „Очерки истории СССР. III—IX вв", М., 1958, стр. 174.

3 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, Երևան, 1963, էջ 269։

4 Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1965, էջ 156։

Ինչպես երևում է աղբյուրներից, III դարում հեթանոսական տաճարներն ունեին խոշոր ստրկատիրական տնտեսություններ՝ ավաններ, դաստակերտներ՝ իրենց ագարակներով։ Քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելուց հետո (301) Տրդատ III-ը այդ տնտեսությունները բռնագրավեց ու նվիրեց եկեղեցուն։ «Եւ զդաստակերտսն (Անահիտի) և զսպասավորսն քրմօք հանդերձ և նոցին գետնովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեանն»[5]։ «Եւ զգեօղն (Թորդան) ամենայն դաստակերտօքն հանդերձ և սահմանօքն յանուն եկեղեցւոյն նուիրէին...»[6]։ «...և զաւանն ամրականաւն հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյն նուիրէին»[7]։ «Եւ քանդէին զնանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիլ յաւանի։ Եւ զգանձս երկոցուն մեհենացն աւարեալ ժողովեալ՝ ի նուէր սպասուց սուրբ եկեղեցւոյն աստուծոյ Թողուին տեղեօքն հանդերձ»[8] և այլն։

Հովհան Մամիկոնյանի վկայությամբ Անահիտի տաճարը ունեցել է 12 լայնարձակ դաստակերտներ՝ «աւանագեղք», որտեղ բնակվում էին բազմահազար երդեր։ Տրդատ թագավորը այդ բոլորը բռնագրավում և նվիրում է եկեղեցուն[9]։ Բացի դրանից, թագավորի կարգադրությամբ երկրի բոլոր բնակավայրերում՝ ավաններում և ագարակներում, եկեղեցու օգտին առանձնացնում են հողակտորներ[10]։

Այսպես ծագեց եկեղեցական խոշոր հողատիրությունը։ Բայց դա միայն սկիզբն էր։ Հայկական եկեղեցու ոսկեդարը սկսվում է Տրդատից հետո, երբ հոգևորականները հարստություն կուտակելու նպատակով դիմում են ամենատարբեր միջոցների։ Ամենասիրված և սովորական միջոցը, որին հաճախակի նրանք դիմում էին, դա եկեղեցու օգտին կատարվող նվիրատվությունների քաջալերումն էր։ Դրան նպաստում էր ժողովրդի մեջ տարածված հավատը, ըստ որի եթե մարդ այս աշխարհում եկեղեցուն զոհաբերի որևէ բան, ապա այն աշխարհում հատուցում կստանա։ Սահակ Պարթևի 51-րդ կանոնում գրված է. «Իշխանք զգեաւղս եւ զդաստակերտս եւ գանձս ոսկւոյ եւ արծաթոյ, այնք յանդաստանաց եւ ի պատճարաց եւ ի հանդերձից պատուականաց, ոմանք վասն անձանց փրկութեան, կէսք յաղագս սիրելեաց եւ ծնաւղաց եւ զվախճանելոց հատուցանել հատուցմունս...»[11]։ Կանոնը պահանջում է պահպանել աստվածային պատվիրանները. «Գանձեցեք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց եւ ուտիճ սպականեն, եւ ոչ գողք ական հատանէն եւ գողանան, եւ թէ դատարկաձեռն ամենեւին մի երեւեցիս առաջի իմ»[12]։

Սակայն հոգևորականների համար այդ բոլորը քիչ էր։ Հարստություն շորթելու նպատակով նրանք դիմում էին խարդախության, խաբեբայության և այլ միջոցների։ Փավստոսը իր «Պատմութիւն հայոց» գրքում նկարագրում է ոմն եպիսկոպոս Հոհաննի, որը խեղկատակություններով հայ թագավորներից շոր-

---

5 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914. էջ 397։

6 Նույն տեղում, էջ 398։

7 Նույն տեղում, էջ 399։

8 Նույն տեղում, էջ 406։

9 Հ. Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 111—112։

10 Ագաթանգեղոս, էջ 423։

11 Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Ա, աշխատությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 412։

12 Նույն տեղում, էջ 413։

թում էր գյուղեր և ագարակներ։ «Եւ էր սա այր կիղծաւոր, և երևեցուցանէր ինքն զանձն իւր մարդկան պահող և խորգահանդերձս... և յագահութեան առանց չափոյ էր հեղհալ...»[13]։ «...յորժամ երթայր առ թագաւորն հայոց, խաղկատակ լինէր նոցա... ի զորք անկեալ յոտս և ի ձեռս սողէր առաջի թագաւորացն, և զուղտու ղձայն ածէր կառաչելով... ասելով թէ ուղտ եմ, ուղտ եմ, և պարքայի զմեղս բառնամ, զիք ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ։ Իսկ թագավորն զմուրհակս գիւղոց կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ողինն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց»[14]։

Այսպիսով, Տրդատ III-ի կրոնական ռեֆորմի հետևանքով աշխարհիկ խոշոր հողատիրության կողքին երևան եկավ եկեղեցական խոշոր հողատիրությունը։ Բավական է նշել, որ, Փավստոսի ասելով, Ներսես կաթողիկոսը ուներ 15 գավառ «իբրև սեփական ի բնէ»[15]։

4. Աղբյուրների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ III—IV դարերում Հայաստանի հողային հարստության մեծ մասը գտնվում էր աշխարհիկ և եկեղեցական խոշոր հողատերերի, իսկ նվազագույն մասը՝ մանր հողատերերի, շինականների ձեռքում։ Բայց թե՛ մեկը, և թե՛ մյուսը սեփականատերեր էին։ Հենց այն հանգամանքը, որ հողատերերը այս կամ այն առիթով եկեղեցուն նվիրում էին կալվածներ, գյուղեր, ագարակներ և այլն, ցույց է տալիս, որ հողը եղել է նրանց տերերի սեփականությունը։ Բերենք մի քանի այլ փաստեր։

Հովհան Մամիկոնյանը վկայում է, որ Կուառ ու Պարեխ գաստակերտները, որոնք Տրդատ թագավորը նվիրեց եկեղեցուն, հետագայում «իշխան ոմն անաւրէն կտեաց զերկոսեանս և ետ գուսանի մի»։ Պատմիչի վկայությամբ Արծրունյաց իշխանը «կշռեաց 22000 դահեկան և տարաւ ետ, նոյն իշխանին և պնեաց զերկոսեան և ետ (սուրբ) Կարապետին վճռով»[16]։ Բացի դրանից, Արծրունյաց իշխանը Ս. Կարապետին նվիրում է «երկու աւանս իւր իշխանութիւն է»[17]։

Ուշադրության արժանի է Ղազար Փարպեցու վկայությունը։ Նա պատմում է, որ Սահակ կաթողիկոսը շատ էր վշտանում «վասն զի ոչ գոյր իւր արու որդի, բայց միայն դուստր մի, զոր էր տուեալ կնութեան Համազասպայ տեառն Մամիկոնէից և Հայոց սպարապետի, որ ծնաւ ի Համազասպայ երիս արու որդիս... որոնց ետ և կնքեաց... գեօղից իւրեանց և ագարակից և որ ինչ միանգամ էր իւր և ետ նոցա ի ժառանգութիւն»[18]։

Այդ կարգի փաստեր կարելի է գտնել Խորենացու, Եղիշեի և մյուս պատմիչների մոտ, նաև կանոնական որոշումների մեջ։ Խորենացին գրում է, որ «այժմ գիւղից և գաւառաց ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցայ մատեանք, մանաւանդ որ ի սեփհական աղատութեան պայազատութիւն»[19]։

---

13 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց», ՍՊԲ, 1883, էջ 225։
14 Նույն տեղում, էջ 228։
15 Նույն տեղում, էջ 97։
16 Հ. Մամիկոնեան, էջ 156—157։
17 Նույն տեղում, էջ 157։
18 Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, 1907, էջ 76։
19 «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1913, էջ 13։

Այդ փաստերը պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ հին Հայաստանում գոյություն է ունեցել հողի մասնավոր սեփականություն։ Հողատերը (խոշոր թե մանր) իրավունք ուներ իր կալվածը, գյուղը, ավանը, ագարակը և այլն, վաճառել, նվիրել, կտակել, գրավ դնել, այսինքն՝ նա ուներ հողին տիրապետելու, այն օգտագործելու և տնօրինելու իրավունքներ։ Խոշոր հողատիրության առկայությունը անհրաժեշտաբար ենթադրում է, որ մինչ այդ հին Հայաստանում գոյություն է ունեցել հողի մասնավոր սեփականություն։ Չէ որ խոշոր հողատիրությունը հանկարծակի չի առաջանում, այն կարող էր առաջ գալ ու ծավալվել ի հաշիվ մանր հողատերերի, նրանց քայքայման ու հողազրկման։ Այնտեղ, որտեղ դեռևս չկա հողի մասնավոր սեփականություն, հողը դեռ չի դարձել առուծախի առարկա— այնտեղ խոշոր հողատիրության առաջացումը անհնարին է։ Այն օրվանից, երբ ծագեց հողի մասնավոր սեփականությունը, երբ հողը դարձավ առուծախի առարկա, խոշոր հողատիրության առաջացումը միայն ժամանակի հարց էր[20]։

5. Այսպես ուրեմն, բերված նյութերը համոզիչ կերպով ցույց են տալիս, որ III—IV դարերում Հայաստանի տնտեսության մեջ գերիշխում էր խոշոր հողատիրությունը։ Երկրի հողային հարստության զգալի մասը կենտրոնացած էր աշխարհիկ և եկեղեցական խոշոր հողատերերի ձեռքում, մի հանգամանք, որ Արշակունիների համար պետք է բացասական հետևանքներ ունենար։ Արդարև, խոշոր հողատիրությունը, առաջ գալով ի հաշիվ մանր հողատիրության, զգալի հարված հասցրեց Արշակունիների ֆինանսական դրությանը։ պակասեց շինականներից գանձվող հարկերի քանակը այն ժամանակ, երբ պետության արտաքին ու ներքին պայմանների բարդացման հետևանքով անընդհատ աճում էին նրա ծախսերը։

Մյուս կողմից, խոշոր հողատիրության ծավալումը թուլացրեց Արշակունիների թագավորության ներքին միասնությունը, ուժեղացրեց պետության ապակենտրոնացման հակումները, որոնք դրսևորվում էին Արշակունիների դեմ կազմակերպված խռովությունների, ապստամբությունների և դավադրությունների ձևով։

Երկրի ներքին հակասությունների սրման հետ մեկտեղ, վատացավ նրա արտաքին դրությունը։ Սասանյանների բարձրացումը Պարսկաստանում և Բյուզանդական կայսրության հիմնումը Բոսփորի ափին շատ լուրջ կերպով բարդացրեցին Արշակունիների արտաքին քաղաքական վիճակը, որը ավելի սրեց պետության ներքին հակասությունները։

Այդ պայմաններում Արշակունիները, բնական է, պետք է որ միջոցներ ձեռնարկեին պետության միասնականությունը վերականգնելու և ամրապնդելու ուղղությամբ։ Այդ միջոցառումներից առաջինը եղավ քրիստոնեության ընդունումը, որ տեղի ունեցավ IV դ. սկզբին Տրդատ III-ի օրոք։ Քրիստոնեական կրոնի միջոցով Արշակունիները ցանկանում էին ամրապնդել պետության խարխլված հիմքերը և ապահովել նրա միասնականությունը, միաժամանակ կրոնով սահմանազատվել Սասանյաններից, որոնք ձգտում էին նվաճել Հայաստանը։

---

[20] Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 19, էջ 497։

Բացի կրոնական ռեֆորմից, Արշակունիները կարևոր բարեփոխություններ կատարեցին պետական օրգանների և ռազմական ուժերի կատարելագործման ուղղությամբ։

Սակայն ինչպես երևում է աղբյուրների տվյալներից, վերոհիշյալ բարեփոխությունները Արշակունիներին չտվին սպասելիք արդյունքները։ Ընդհակառակը, պետության դեմ կազմակերպվող խռովությունները ավելի հաճախակի էին դառնում, դրանք հրահրվում ու հովանավորվում էին Բյուզանդիայի և Պարսկաստանի կողմից։ Արշակունիները դաժանորեն ճնշում էին աշխարհատերերի և գավառատերերի կողմից կազմակերպված խռովությունները, իսկ ըմբոստների կալվածները բռնագրավում էին արքունիքի օգտին։ Այդպես վարվեց Խոսրով III-ը (330—338) Մանավազյան և Որդունի, Դատարեյ ու Բակուր իշխանների հետ։ Պետության դեմ կազմակերպված ելույթները ավելի լայն չափերի հասան Արշակ II-ի ժամանակ (345—367)։ Բազմաթիվ նախարարական տոհմեր ենթարկվեցին խիստ պատժի, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվեց արքունիքի օգտին։ Սակայն Արշակ II-ին չհաջողվեց հնազանդեցնել խռովարարներին ու միավորել երկրի ուժերը։ Նա ինքը զոհ դարձավ նախարարների կողմից կազմակերպված դավադրությանը։ Պապ թագավորը (369), որ բյուզանդական զորքի օգնությամբ վերականգնեց Արշակունիների գահը, ամենայն դաժանությամբ ճնշեց խռովությունները։ Նրա կողմից կազմակերպված պատժիչ ջոկատները Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ բնաջինջ արին բազմաթիվ նախարարական տոհմեր, իսկ կալվածները բռնագրավեցին արքունիքի օգտին[21]։

Պապ թագավորը խոշոր միջոցառումներ իրականացրեց հայկական եկեղեցու նկատմամբ։ Նա բռնագրավեց եկեղեցական հողերի զգալի մասը, վերացրեց անապատները, անկելանոցները, հյուրանոցները և այլ եկեղեցական հիմնարկությունները, որոնք կառուցվել էին Ներսես կաթողիկոսի օրոք, իսկ աշխատունակ ժողովրդին հրամայեց վերադառնալ իրենց տեղերը և վճարել պետական հարկերը։ Շինականների հարկունակությունը բարձրացնելու նպատակով Պապը վերացրեց եկեղեցու օգտին ժողովրդից գանձվող տասանորդը։

Բացի դրանից, Պապ թագավորը վերացրեց բյուզանդական եկեղեցու ազդեցությունը հայկական եկեղեցու վրա։ Նա վերացրեց այն սովորությունը, որի համաձայն հայոց կաթողիկոսը ձեռնադրվում էր Կեսարիայում։ Այնուհետև կաթողիկոսը պետք է ձեռնադրվեր Հայաստանում և հաստատվեր թագավորի կողմից։ Այսպիսով, հայկական եկեղեցին ընդմիշտ կտրվեց հռոմեական եկեղեցուց ու դարձավ ինքնուրույն։ Դա Պապ թագավորի կարևորագույն բարեփոխություններից մեկն էր։

6. Պապ թագավորի կողմից իրականացված ռեֆորմների մեջ կարևորագույնը պետք է համարել այն արմատական փոփոխությունը, որ նա անցկացրեց հողատիրության ձևի բնագավառում։

Պատմական այն անցքերը, որոնք տեղի ունեցան Հայաստանում Տրդատ III-ի, Խոսրով III-ի, Տիրանի և Արշակ II-ի ժամանակաշրջանում, պետք է Պապին և նրան մոտիկ կանգնած մարդկանց համոզեին, որ նախարարների խռովությունների ճնշումը ու նրանց ունեցվածքի բռնագրավումը ցանկալի արդյունքներ չեն տալիս։ Ինչ վերաբերում է բռնագրաված կալվածներին, ա-

21 Տե՛ս Փավստոս, էջ 175—179։

պա դրանք, որպես կանոն, նորից վերադարձվում էին պատվազուրկ արված նախարարների որդիներին։ Ուրեմն անհրաժեշտ էր դտնել առավել ազդու միջոց նախարարներին արքունիքին ավելի սերտ կապելու համար։ Եվ որովհետև նախարարների հզորությունը հիմնված էր խոշոր հողային սեփականության վրա, ապա այդ նպատակին հասնելու համար պետք է փոխվեր գոյություն ունեցող հողատիրության ձևը։

Այսպես, ուրեմն, ինչում էր կայանում այդ փոփոխությունը և ինչ նոր հարաբերություններ առաջ եկան դրա հետևանքով։

Պապ թագավորի հողային ռեֆորմի մանրամասնությունները մեզ, իհարկե, հայտնի չեն։ Բայց Խորենացու վկայությունից պարզվում է հետևյալը. հետագա խռովությունները կանխելու և խռովարարներին արքունիքի հետ կապելու նպատակով բռնագրաված կալվածները այլևս չեն վերադարձվում նրանց ժառանգներին որպես հայրական սեփականություն, այլ շնորհում են նրանց արքունիքին մատուցած ծառայությունների համար որպես պարգևական, որոշակի պայմանով, որի խախտման դեպքում, արքունիքը կալվածը ետ էր վերցնում։ Այսպիսով, խոշոր ու միջին հողատերերը ընդմիշտ կորցնում են իրենց սեփական կալվածները և դառնում են արքունի հողերի ձեռնավորները (держатели)։

Մյուս կողմից, որպեսզի ապահովվի տվյալ գավառում բնակվող շինականներից ու քաղաքացիներից հարկերի հավաքումը և նրանց կողմից պետական պարտականությունների կատարումը, պարգևաուներին (պարգևական ստացողներին) արքունիքը տալիս է պետական իշխանության ֆունկցիաներ։ Դրան համապատասխան պարգևական ստացողը տվյալ գավառի բնակիչների նկատմամբ հանդես է գալիս որպես տ ե ր (Արծրունյաց տեր, Մոկաց տեր, Մամիկոնեից տեր, Ամատունի տեր և այլն)։

Եվ վերջապես, արքունիքը պարգևառուի վրա պարտականություն է դնում, որպեսզի նա իրեն ենթակա գավառում ապրող բնակիչներից զինվորական ծառայության համար հավաքագրի սահմանված թվով մարդիկ ու առաջնորդի նրանց ռազմական արշավանքի ժամանակ։ Զինվորական առաջնորդի դերում պարգևական ստացողը հանդես էր գալիս որպես ի շ խ ա ն (իշխան Ամատունի, իշխան Կամսարական, իշխան Ռշտունի և այլն)։

Ստորև մենք կանգ կառնենք միայն պարգևականի վրա։

Խորենացին պատմում է, որ երբ պատերազմները վերջացան, ներքին խռովությունները ճնշվեցին և երկիրը խաղաղվեց, «արքայն Պապ դարձոյց ի Կամսարականն Սպանդարատ զամենայն ինչ զոր յափշտակեալ էր հօր իւրոյ Արշակայ, զգաւառն Շիրակայ և զԱրշարունեաց, ոչ իբրև զանիրաւ զգաստուրիւն հօր իւրոյ Արշակայ, այլ որպես պարգևս ընդ վաստակոց քաջին Սպանդարատայ, որ սպան զՂեկաց արքայ։ Այլ և զայլոց նախարարացն դարձոյց զզրկանս և յոյժ անրնչասիրաբար ցուցանէր զիւր ախորժակն և առատաբար կայր»[22]։

Խորենացու այս վկայության մեջ արձանագրված է Պապ թագավորի հողային ռեֆորմի գլխավոր իմաստը։ Արշակ II-ի կողմից Կամսարականներից բռնագրաված կալվածները՝ Շիրակի և Արշարունյաց գավառները, Պապը վերա-

22 Խ ո ր ե ն ա ց ի, էջ 308։

դարձնում է այդ տոհմի ժառանգ Սպանդարատին, բայց ոչ այն բանի համար, որ այդ կալվածների բռնագրավումը եղել է անօրինական, այլ որպես պարգևական այն ծառայությունների դիմաց, որ Սպանդարատը մատուցել էր արքունիքին: Սա արդեն նոր բան է, նոր հարաբերություն, որ ծագեց Պապի թագավորության ժամանակ: Իհարկե, մինչ այդ էլ հայոց թագավորները այս կամ այն առիթով նախարարներին պարգևում էին գյուղեր, ագարակներ և այլ կարգի կալվածներ, բայց դրանք նվիրատվություններ էին բառիս բուն իմաստով, այսինքն՝ անհատույց գործարքներ էին: Բացի դրանից, նվիրաբերված գյուղը, ագարակը և այլն դառնում էին ստացողի սեփականությունը: Իսկ այստեղ խոսքը գնում է պայմանական հողատիրության մասին: Այդ կարգի պարգև ստացողը պարտավոր էր հատուցել իր ծառայությամբ:

Պարգևականը, որի մասին այստեղ խոսվում է, դեռևս ֆեոդալական սեփականության ձևը չէ, այլ նրա սաղմն է: Նրա շնորհման ժամանակ արքունիքի և պարգևառուի միջև կնքվում էր հատուկ համաձայնություն (դաշինք. ուխտ), որը վավերացվում էր երկու կողմերի հավատարմության երդումով:

Խորենացին պատմում է, որ երբ Սասանյանները և Բյուզանդիան համաձայնության են գալիս ու Հայաստանը բաժանում երկու մասի (387)[23], հայ նախարարներից շատերը թողնում են իրենց կալվածները ու անցնում բյուզանդական մասը: Պարսկական թագավոր Շապուհը, իմանալով այդ բանը, հատուկ նամակով դիմում է գնացած նախարարներին և առաջարկում նրանց վերադառնալ և տիրանալ իրենց կալվածներին: «Իսկ այնք որք ոչ լուիցեն հրամանաց մերոց, զտունս նոցա հանդերձ գիւղօք և դաստակերտօք հրամայեցանք ունել յարքունիս»[24]:

Նախարարներից ոմանք Շապուհի հրամանի համաձայն վերադառնում ու տեր են դառնում իրենց կալվածներին, իսկ նրանք, ովքեր մնացին Հայաստանի բյուզանդական մասում՝ «զժառանգութիւնս նոցա կալաւ խոսրով յարքունիս հրամանաւ Շապհոյ, և ոչ երող զկալուածս որդւոյ ի հայր, և ոչ եղբօր յեղբայր»[25]:

Հետագայում, երբ գնացած նախարարները համոզվում են, որ բյուզանդական կայսրությունը նպատակ չունի իր մասում վերականգնել Արշակունիների թագը, ինչպես այդ ժամանակավորապես տեղի ունեցավ պարսկական մասում, դիմում են Խոսրով թագավորին և հայտնում, որ իրենք պատրաստ են ծառայելու նրան «երբ հաստատեսցես առ մեզ դաշամբք զերիսս զայսոսիկ. Առաջին չյիշել զյանցանս մեր, զոր պատերազմեցաք ընդ քեզ ի հարկէ և ոչ ի կամաց: Երկրորդ, զի դարձուսցես ի մեզ զամենայն ժառանգութիւնս մեր՝ որ ի մասինդ Պարսից, զոր հատէք յարքունիս: Երրորդ, հնարել թափել զմեզ ի կայսերէ, զի մի վրդովեսցեն զբնակութիւն մեր, որք ունիմք իշխանութիւն յայսմ բաժնին: Եւ զայս պայման ուխտի գրել և խաչ հաստատել կնքեսցես զորս տեսեալ՝ փութասցուք ի ծառայութիւն ձեր»[26]:

---

23 Պապի թագավորությունը շատ կարճ եղավ: Նրա ներքին ու արտաքին քաղաքականությունը դուր չեկավ Բյուզանդական կայսրությանը: Վաղես կայսրը Հայաստանում գտնվող հռոմեական զորքի հրամանատար Տրայանոսին պատվիրեց սպանել Պապին: Տրայանոսը Պապին կանչում է իր մոտ հյուր և նենգաբար սպանում (374):

24 Խորենացի, էջ 316:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, էջ 323—324:

Խոսրով թագավորը ընդունում է նախարարների այդ պայմանները։ Նա գրում է նախարարներին, որ համաձայն է «դարձուցանել ի ձեզ զժառանգութիւնս ձեր, զոր ունիմք յարքունիս, բայց 'ի յայնմանէ՝ զոր ումեմ ումեմ պարգևեցաք, և ոչ շրջին պարգևք բազաւորաց առանց վնասու. մանավանդ զի ի դիւան հօրն մերոյ տեառն Շապհոյ արքայից արքայի եմուտ. այլ փոխանակ ընդ այնր և յարքունուստ լնումք և զձերոյն պակասութիւնն»[27]։

Խորենացու այդ վկայությունները, ինչպես տեսնում ենք, բացահայտում են պարգևականի կարևորագույն հատկանիշները։ Պարգևականը (շնորհականը, բենեֆիցիումը) պայմանական կալված է, այն շնորհվում է արքունիքին մատուցած ծառայությունների համար[28]։ Պարգևականի շնորհման ժամանակ արքունիքի և պարգևականը ստացողի միջև կնքվում է ուխտ (դաշինք, համաձայնություն), որի ուժով արքունիքը պարտավորվում է պարգևառուի նկատմամբ տիրապետություն և խնամակալություն, իսկ պարգևառուն արքունիքի նկատմամբ՝ արդարամտությամբ ծառայություն ու հնազանդություն։ «Մեր առ ձեզ տէրութիւն և խնամակալութիւն և ձեզ առ մեզ արդարամտութեամբ ծառայութիւն և հնազանդութիւն»[29]։

Արքունիքը կարող է պարգևառուին շնորհազրկել ու պարգևականը ետ վերցնել, եթե նա հանցագործություն է կատարել. «և ոչ շրջին պարգևք թագաւորաց առանց վնասու»,— ասում է Խորենացին, այսինքն՝ թագավորական պարգևականները ետ չեն վերցվում, եթե հանցանք չեն գործել պարգևառուները։ Դաշինքը կնքելուց հետո թագավորը պարգևառուին տալիս է մատանի, ժապավեն (գլխարկի մասը), դրոշակ և այլ իրեր, որոնք խորհրդանշում էին պարգևառուի տիրապետության մեջ մտնելը[30]։

---

27 Նույն տեղում, էջ 325։

28 «Իսկ յաղագս տէրութեանն Արծրունւոյ թող վայր սր,— ասում է պարսկական թագավոր Վաղարշը ի պատասխան Վահան Մամիկոնյանի խնդրանքի,— զի գիտասցեն մարդիկն (թէ) որ ի տոհմէն, են, սպաս ինչ արժանաւորապէս ցուցանել առ մեզ և վաստակս ինչ յօգուտ Արեաց աշխարհիս վաստակել. հայեսցուք ապա և մեք յարժանն» (Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, էջ 338)։

29 Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, էջ 100։ Աղբյուրներում կան այդ ֆորմուլի մի շարք այլ տարբերակներ. «Թագաւորն վարեսցի ուղղութեամբ և նոքա (նախարարները) ծառայեսցեն միամտութեամբ» (Մ. Խ ո ր ե ն ա ց ի, էջ 292). «Սէր առ մեզ հաստատուն պահեցեք. և մեք առ ձեր զմտերիմն հատուցուք ծառայութիւն» (Նույն տեղում, էջ 293). «Մեր բնիկ տեարք եք... և մեք ծառայութիւն առնեմք ի հպատակ լինիմք» (Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, էջ 305). «Մեր բնիկ տեարք եք, և մեք ձեր բնիկ ծառայք եմք» (Նույն տեղում, 372)։

30 Ստ. Օրբելյանը և Կաղանկատվացին պատմում են, որ Հայաստանի բաժանումից հետո, Շապուհը ցանկանում էր իմանալ, թե ո՞վ և ո՞ր ազգից բարձ ու պատիվ ունի պարսկական արքունիքում։ Այդ նպատակով նա կազմակերպում է մեծ ճաշկերույթ և «բաժակօք և ուտովք առաջի իւր զիւրաքանչիւր ուրուք նախամեծարս ցուցանէր»։ Դիմելով հայոց նախարարներին, Շապուհը ասում է. «զՊարսից և զՊարթևաց զբնական պահլաւիկս և զազատագունդս զազատ արաց զԱրեաց աշխարհի նախամեծար դասապատիւ քաջ դիտեմք զորպիսութիւն, բայց զԱրմենու զազատատոհմ և զնոցին նախապատիւ զնախադաս նախագահութիւնս ոչ կարացանք դիտել ոչ ի նախնեաց մերոց հարցն հարանց թագաւորաց և ոչ այլ ուստեք յամենահմաստ մատենագրաց։ Եւ արդ՝ մի երկուց առաջի կայ ձեզ նախարարացն հայոց ազատ արանց կատարել խնդիրս մերոց Արեաց աշխարհաժողով ազատազարմ կուսակալաց. ցուցանել ձեզ զնախնական զդիր ըստ իւրաքանչիւրումն ըստ տանց ազատազարմն եկացն ձերոց նախաստիճան և զնախանիստ պատիւն. և դարձեալ մեծագոյնն ունել զչքեղաշուք մեծարանս ևս քան զևս։ Եւ եթէ ոչ կարեք ակն ի յայտ Արեացս զնդի ժողովոյ ցուցանել զդիր նախագահութեան զպատիւ և զտուն, զ'ողջ և զչուր և զստացուածս ձեր Արեաց աշխարհի ազատ արանցս շնորհեսցուք և զձեզ ապաշնորհ և ունայնու արձակեսցուք» (Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն, Պատմութիւն նահանգին

Պարգևականը ոչ միայն պայմանական, այլև ցմահ տիրույթ էր։ Այն շնորհվում էր մինչև պարգևատուի կամ պարգևառուի մահը։ Եթե նրանցից մեկը մահանում էր, ապա պարգևականը անցնում էր արքունիքին։ Նախկին հարաբերությունները վերանորոգելու և վերականգնելու համար պարգևառուն, կամ նրա ժառանգը, սեպուհը պետք էր դիմեր արքունիքին։ Գահի վրա տեղի ունեցած փոփոխությանը, որպես կանոն, միշտ ուղեկցում էր հին հարաբերությունների փոփոխում կամ վերանորոգում։ «Հեղոյթ արկանէր (պարսկական թագավորը) առաջի նոցա զպարգևս երկրաւորս, և վերստին ամենեցուն զպատիւս և զգահսն նորոգէր, յառաջ մատուցանելով և երևելի առնելով ընդ ամենայն տիեզերական իշխանութիւնն։ Եւ անբաւ առատութեամբ ագարակս և աւանս միում նոցա յարքունուստ շնորհէր»[31]։

Պարսկական արքունիքում սովորություն կար, ասում է Խորենացին, երբ գահ էր բարձրանում նոր թագավոր «նույն ժամայն փոխէին զդրամ գտեալ ի գանձս արքունի, զնորայն տպաւորեալ պատկեր, և գիր դիւանին՝ յայլ փոխեալ նորա անուամբ, սուղ ինչ զանազանեալ, ոչ բառնալով զհինն։ Իսկ եթէ յամիցէ ի տերութեանն ամս բազումս, և արասցէ աշխարհագիր նոր, թողուին զայն, որ ի հնոյն փոխեցաւ, զի միայն ի նորոյն վերագրեսցի անուն»[32]։

Այդ կապակցությամբ Խորենացին պատմում է, որ երբ սպարապետ Սահակ Բագրատունին մահանում է, Սահակ կաթողիկոսը դիմում է հայոց թագավոր Վռամշապուհին (392) և խնդրում սպարապետի պատիվը և գահը շնորհել Համազասպ Մամիկոնյանին, որը կաթողիկոսի փեսան էր։ Թագավորը չի բավարարում կաթողիկոսի խնդրանքը, պատճառաբանելով, որ նա, առանց պարսկական արքունիքի կարգագրության, չի կարող այդ բանն անել։ Այդ պատճառով Սահակ կաթողիկոսը մեկնում է պարսկական արքունիք և իր խնդրանքով դիմում Արտաշիրին՝ Շապուհի որդուն, որ հոր մահից հետո Պարսկաստանի թագավորն էր։ Սահակը խնդրում է Արտաշիրից նաև մեղմացնել Կամսարականի և Ամատունու ժառանգների վիճակը «իբր յաստուածային հրամանէ՝ ոչ բառնալ որդւոց զյանցանս հարց, մանաւանդ զի հարքն, որք մեղանն, նոքին սակս այնր և մեռան։ Որոնց մնացելոցն պարգևեալ զկեալն, հրամայեաց զտունս երկաքանչիւրոց զկալեալսն յարքունիս՝ դարձուցանել ի նոսա. բայց միայն ի գահ հայրենի ոչ հաստատել, այլ ի խոնարհ քան զբազումս մատուցեալ նախարարս, ի կարգ կրտսերագունից պատրաստել»[33]։

Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 30—31, «Մովսէսի Կաղանկատվացւոյ Պատմութիւն Ալուանից աշխարհի», Թիֆլիս, 1913, էջ 119—120։

Այն իրադարձությունը, որի մասին խոսվում է այս պատմության մեջ, ինչպես արդարացի նկատել է Ն. Ադոնցը, անշուշտ, հետագայում ենթարկվել է մշակման, սակայն, անկախ դրանից, արտացոլում է պատմական իրականությունը։ Կասկած չկա, որ Արշակունիների վերացումից հետո Սասանյանները պետք է որոշեին հայ նախարարների վիճակը։ Իսկ դրա համար անհրաժեշտ էր ինչ-որ նախնական փաստաթուղթ։ Ագաթանգեղոսի մոտ կար 17 նախարարների ցուցակը, որի համաձայն Շապուհը որոշում է հայ նախարարների տեղը պարսկական արքունիքում։ Այդ պատմության մեջ արժանի է ուշադրության «բաժակօք և ուտովք առաջի իւր ուրուք նախամեծարս ցուցանէրս (տե՛ս նաև Եղիշե, Պատմութիւն Վարդանանց. Տփղիս, 1904, էջ 16։) արտաքայտությունը, որը, ինչպես երևում է, խորհրդանշում էր կալվածի, գահի և պատվի վերաշնորհումը. բաժակով (յուղ), ոսկյա պսակ և ձյուղը հավանական է, կալվածի, գահի և պատվի շնորհման և ընդունման խորհրդանշաններն էին։

31 Եղիշե, էջ 72։

32 Խորենացի, էջ 330—331։

33 Նույն տեղում, էջ 330։

Արտաշիրը կատարում է կաթողիկոսի խնդրանքը։ Վռամշապուհին գրած իր նամակում Արտաշիրը կարգադրում է «զՀամազասպ կացուսցես ի վիրա՝ զօրացդ սպարապետ՝ մեր հրամանաւ և աղգի դորա տացես զգահ հինգերորդ պատուոյ նախարարացդ և զկեղս և զդաստակերտս, զոր տուեալ է նախնեացն յոց հարց դորա, կալցին զոքա։ Սապես և զտունս վնասակարաց աղգացդ, զոր կալաք յարքունիս, թողցես ի բաց՝ աներկիւղաբար ժառանգել նոցին մնացորդաց. բայց զահուց հայրենականաց պատուոյ մի արասցես արժանի. զի և մեք ի մերում դիւանի հրամայեցաք գրել»[34]։

Պարգևական հողատիրությունը լայն տարածում էր ստացել եկեղեցական կալվածներում։ Հայ եկեղեցին հոգևորականներին շնորհում էր կալվածներ՝ ցմահ օգտագործման։ Ըստ այն ուխտի, որ կնքվում էր եկեղեցու և հոգևորականների միջև, այդ վերջինները պարտավոր էին պահպանել եկեղեցու սահմանած կարգը ու կատարել այն ծառայությունները, որոնք դրված էին նրանց վրա։ Եթե եկեղեցականը խախտում էր սահմանված կարգը և չէր հետևում կանոններին, ապա շնորհազուրկ էր արվում։ Շահապիվանի ժողովի (444) Բ կանոնում ասված է. «Եթէ կնաւոր երէց գտցի ի պղծութեան եւ ի պոռնկութեան կամ յայլ գործս չարեաց եւ ստուգեալ վկայիւք՝ քահանայութիւնն լուծցի եւ եկեղեցւոյ բաժնէ հեռացեալ լիցի 3 (300) դրամ տուգանս տաքէ... Եթէ երէց եւ եթէ սարկաւագ կանոն այդ կացցէ. եւ նոքա ի կարգ զինուորութեան կացցեն եւ ի հարկս արքունի»[35]։

Ներսես կաթողիկոսի և եպ. Ներշապուհ Մամիկոնյանի (548—557) կանոններում նույնպես կան վկայություններ եկեղեցական շնորհականի մասին։ Այսպես, օրինակ, Ե կանոնում գրված է. «Երկականայք թէեւ գրակարդացք իցէն եւ պաշտաւնեայք, ընդ զինուորս կացցեն վասն ուխտաղանցութեանն, եւ ի պտղոյ եւ ի մտից սրբոյ եկեղեցւոյ եւ ոչ միում մասին արժանի մի լիցին... Նոյնպէս եւ տգէտք մի իշխեսցեն մտից եկեղեցւոյ, զի անիրաւ է. վասն անուսումնութեան ընդ զինուորս կացցեն եւ զհայրենի հող եւ զջուր կալցին եւ յարքունիս հարկ տացեն»[36]։

7. Չի կարելի, իհարկե, գործը պատկերացնել այնպես, որ պարգևականի հաստատումով իսկույն ևեթ անհետացան հողային սեփականության նախկին ձևերը։ Բնավ ոչ։ Պարգևական կալվածների կողքին շարունակում էր գոյություն ունենալ հողի մասնավոր սեփականություն։ Նախարարներից շատ շատերը, բացի պարգևականից, ունեին կալվածներ, որոնք հանդիսանում էին նրանց մասնավոր սեփականությունը։ Այդ կարգի կալվածները կարող էին լինել ազատ առուծախի առարկա։ Նույնիսկ շինականները մասնավոր սեփականության իրավունքով ունեին հող և ջուր։ Այդ բանը շատ պարզ երևում է Շահապիվանի, Ներսես կաթողիկոսի ու Ներշապուհ Մամիկոնյանի և Դվինի հինգերորդ ժողովի կանոններից։ Այդ կարգի կալվածները, ի տարբերություն պարգևական կալվածների, աղբյուրների մեջ անվանվում են հայրենիք։

Այդ տեսակետից պատահական չէ Եղիշեի վկայությունը. «Եւ եթէ ինչք ուրուք յուիշտակեալ իցեն, դարձցին անդրեն։ Այսպէս և երկիրք, եթէ հայրե-

34 Նույն տեղում, էջ 332։

35 «Կանոնագիրք հայոց», էջ 430—431։

36 Նույն տեղում, էջ 460։

նիք, եթէ պարգևականք և եթէ քսակադինք, և հանեալ ուրուք իցէ, հրամայ՝-ցաք զի դարձիցին»[37]։

Ուրիշ կերպ չէր կարող լինել. հասարակությունը անցում էր կատարում ստրկատիրական կարգերից դեպի ֆեոդալականը։ Այդ պատճառով նրա էկոնոմիկան բաղկացած էր ինչպես գալիք, այնպես էլ մեռնող հասարակություններ-ի տարրերից։

Ն. Ադոնցը և մի շարք այլ պատմաբաններ գտնում են, որ հայկական «հայրենիք» բառը իր իմաստով համընկնում է Մերովինգների ժամանակաշրջանի ալլոդին։ Ինչպես հայրենիքը, այնպես էլ ալլոդը համարվում էր լիակատար մասնավոր սեփականություն[38]։ Դրա հետ, իհարկե, չի կարելի չհամաձայնվել։ Վերը շարադրած նյութը հաստատում է այդ եզրակացության ճշմարիտ լինելը։ Դրա հետ միասին պետք է ասել, որ հայրենիքը (ինչպես և ալլոդը) ֆեոդալական սեփականության ձև չէր, ինչպես ոմանք ենթադրում են։ Ֆեոդալական սեփականությունն ունեցել է միայն մի ձև, դա ֆեոդն էր, պարգևականը ֆեոդի նախնական, սաղմնային վիճակն էր, որ առաջ եկավ ստրկատիրական հասարակության ընդերքում։ Ինչ վերաբերում է հայրենիքին, ապա այն իր իմաստով ու բովանդակությամբ չէր համընկնում ֆեոդին։ Ճիշտ է, պատմական այս շրջանում, աղբյուրների տվյալների համաձայն, հայրենիքը նույնպես համարվում էր ժառանգություն, բայց չնայած դրան, նա իր բովանդակությամբ ու էությամբ տարբերվում էր ֆեոդից։ Հայրենիքի տերը, ինչպես նկատեցինք, ազատ կերպով կարող էր տնօրինել իր կալվածը, նա ուներ կալվածի նկատմամբ բացարձակ, այսինքն՝ լիակատար սեփականատիրական իրավունք. ֆեոդալի իրավունքները, ընդհակառակը, սահմանափակ էին[39]։ Նա իրավունք չուներ, օրինակ, առանց որդիների, աղջիկների, նույնիսկ եղբայրների համաձայնության, կալվածը վաճառել, նվիրել կամ գրավ դնել։ Նույնիսկ այն դեպքում, երբ բոլորի համաձայնությամբ ու կամքով կալվածը (կամ այլ անշարժ գույք) վաճառվում էր, կալվածատիրոջ ազգականները իրավունք ունեին սահմանված ժամկետում ետ գնելու այն[40]։

Բացի դրանից, ֆեոդալական հողային սեփականությունը ուներ դասային բնույթ. հողը պատկանում էր ամբողջ ֆեոդալական դասակարգին. նրան ներհատուկ էր հիերարխիական կառուցվածք։ Հողի տիրապետումը սերտորեն զուգակցվում էր զինվորական ծառայության հետ։ IV—V դարերի հայրենիքը այդպիսի հատկանիշներ չուներ։ Այն հանդիսանում էր իր տիրոջ լիակատար սեփականությունը, այդ պատճառով չի կարելի հայրենիքը համարել ֆեոդալա-

---

37 Ղազարեն, էջ 123։ Տե՛ս նաև էջ 190, 151։

38 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, С. Петербург, 1908, էջ 458.

39 «Վաճառք ամենայն հաստատին,— ասված է Մխիթար Գոշի Դատաստանագրքի 107 հոդվածում,— յորժամ որք վաճառենն՝ ամենեցուն յանձնառութեամբ եւ վկայութեամբ կամքն ընդ նոսա իցէ։ Ըստ այսմ—թէ հայր վաճառիցէ պարտ է որդւոց եւ դստերաց կամքն ընդ նմա լինել եւ եղբարց, որք ժառանգիցեն։ Նմանապես՝ թէ որդին վաճառէ—հօրն եւ եղբարցն եւ քեռցն։ Ապա թէ ոչ—յորժամ կամին անդրէն դարձուցանել՝ իշխան լիցին թէ եւ գրով հաստատեալ իցէ» (տե՛ս «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց», Վաղարշապատ, 1880, էջ 416)։

40 «Եթէ վասն աղքատութեան ի կալուածոյ վաճառէ, եղիցին փրկանօք յազգատոհմէ իւրմէ մինչեւ յեւթն ամ ըստ օրինացն։ Զեւթն ամն եղաք, բայց առաւելուլ որքան կարէ—արժանի է։ Իսկ եթէ ոչ կարիցէ փրկել յեւթն ամն անտի յառաջ, հաստատիցի վաճառն։ Ապա թէ ըստ այլոյ պատճառի վաճառն իցէ ի՛նքին ամի հաստատիցի» (նույն տեղում, 363)։

կան սեփականության ձև։ IV—V դդ. հայրենիքը լականորեն տարբերվում էր միջնադարյան Հայաստանի հայրենիքից։

8. Ինչպես արդեն նկատեցինք, պարգևականը ֆեոդալական սեփականության սկզբնական, սաղմնային ձևն էր։ Սա դեռ ֆեոդ (խոստակ, ձեռական) չէր, բայց իր ծագման օրից հակում ուներ այդպիսին դառնալու։

Աղբյուրներում եղած տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ պարգևառուի մահից հետո պարգևականը, որպես կանոն, նորից շնորհվում էր նրա ժառանգին։ Նույնիսկ այն դեպքում, երբ պարգևառուն այս կամ այն հանցանքի համար շնորհազրկվում էր, բռնագրավված կալվածները արքունիքը նորից շնորհում էր նրա որդուն։ Այդ տեսակետից ուշագրավ է Կամսարականների տոհմի օրինակը։ Ինչպես տեսանք, այդ տոհմի կալվածները բռնագրավել էր Արշակ II-ը։ Պապ թագավորը բռնագրավված կալվածները վերադարձնում է Կամսարականների տոհմի ժառանգ Սպանդարատին որպես պարգևական այն ծառայությունների համար, որ նա մատուցել էր Արշակունիների արքունիքին։ Սպանդարատի որդի Դավաղոնը շնորհազրկվեց պարսկական թագավոր Շապուհի կողմից, քանի որ նա մի շարք այլ նախարարների հետ միասին անցել էր Հայաստանի բյուզանդական կայսրության բաժինը։ Հետագայում հայոց խոսրով IV թագավորը բռնագրավված կալվածները վերադարձնում է Դաղավոնին, երբ, ինչպես ասվեց վերևում, նա վերադարձավ Բյուզանդիայից։ IV դարի 80-ական թթ. վերջերին Դաղավոնը և իշխան Ամատունին իրենց ջոկատներով հարձակում են գործում պարսկական թագաժառանգ Արտաշիրի բարավանի վրա՝ նպատակ ունենալով ազատել հայոց խոսրով թագավորին, որ Շապուհի կարգադրությամբ կալանավորվել և տարվում էր Պարսկաստան։ Հարձակումը անհաջող եղավ, Դաղավոնը և իշխան Ամատունին ընկան մարտում, իսկ նրանց կալվածները բռնագրավվեցին պարսկական արքունիքի կողմից։ Շապուհի մահից հետո նրա հաջորդ Արտաշիրը, Սահակ կաթողիկոսի խնդրանքով, Կամսարականների կալվածները վերադարձնում է Դաղավոնի որդի Հրահատին։ V դարի 80-ական թթ. մարզպան Վահան Մամիկոնյանի խնդրանքով պարսկական արքունիքը Կամսարականների ժառանգին է վերադարձնում բռնագրավված կալվածները և այլն։

Այսպես ուրեմն, ավելի քան հարյուր հիսուն տարիների ընթացքում Կամսարականների կալվածները բազմիցս բռնագրավվում են Արշակունիների և Սասանյանների կողմից, բայց, որպես կանոն, նորից շնորհվում այդ տոհմի ժառանգներին, իսկ հետագայում դառնում են նրանց ժառանգությունը։ Կասկած չկա, որ նույն բանը տեղի է ունեցել նախարարական մյուս տոհմերի հետ։

Դժբախտաբար աղբյուրներում եղած տվյալները հնարավորություն չեն տալիս մեզ քայլ առ քայլ հետևելու պարգևականի զարգացման ընթացքին և ցույց տալու, թե երբ և ինչպես այն փոխարկվեց ֆեոդի (խոստակի, ժառանգության)։ Որոշ տվյալներ կան եկեղեցական պարգևականի (շնորհականի) մասին։ Այդ տեսակետից ուշագրավ են Դվինի հինգերորդ ժողովի (645) կանոնները։ Եթե եկեղեցու ժառանգավորներից որևէ մեկը (տղամարդ թե կին), ասված է այդ ժողովի Ը կանոնում, անորդի լինի, այսինքն՝ չունենա որդի կամ թոռ, ապա «ի կենդանութեան իւրում իշխան լիցի ինքն ունել զամենայն ու անցեալ ըստ ինքն ի մերձաւորացն մի իշխեսցէ հեռացուցանել զհող և զջուր և զամենայն շնորհս եկեղեցւոյն»։ Եկեղեցականը իրավունք ունի իր մերձավորներից որևէ մեկին որդեգրել և շնորհականը թողնել նրան, «իսկ եթէ որդե-

գրեալն արժանասցի քահանայութեան՝ գեղջն վկայությամբ, կամ որ որդեդրեացն զնա եւ չէր անկ նմա քահանայութիւն սակայն, զկէս շնորհին կալցէ յաղագս ձեռնադրութեան աղատէ ի հարկէ եւ ի բեկարէ։ Եւ զկես շնորհին եւ զհող եւ զջուր բովանդակ սրբոյ եկեղեցւոյ թողցէ վախճանեալ քահանայն եւ կին նորա. ամենայն իսկ շնորհն մերձաւորացն եղցի՝... զի չվայել է Սրբոյ եկեղեցւոյ զժառանգութիւն յարժանաւոր մերձաւորացն օտարացուցանել և տալ հեռաւոր օտարաց։ Հայց եթէ անկաւորացն կամաւորութեամբ վաճառել իսկ, թողուցուսցէ վարդապետն, զայն մի շինականի ումեք, այլ յուխտէ եկեղեցւոյն թէեւ հեռաւոր եւս իցէ. իշխանէ վարդապետն եւ մերձաւորն չմերձաւորացնել... և այս սահմանադրութիւն եկեղեցւոյ ի Հերակղէ Հռովմայ թագաւորէ, և ի Խոսրովայ Պարսից արքայէ աւուրցն և այսր եղիցի. իսկ ինչ որ յառաջ քան զնոցա ժամանակն գործեցեալ է, մի շարժեցի. չգիտեմք ինչ հաստատուն՝ թէ որպես կալեալ սահմանանեցաք յանուն տեառն, և մի ոք իշխեսցէ փոխել զայս սահմանադրութիւն»[41]։

Այսպիսով Դվինի հինգերորդ ժողովը վավերացնում է շնորհական կալվածների փոխարկումը ժառանգականի (ֆեոդի)։ Քահանայի կամ եկեղեցու այլ ժառանգի մահից հետո կալվածը անցնում է նրա ժառանգին՝ որդուն կամ թոռին, իսկ դրանց բացակայության դեպքում՝ արժանավոր մերձավորին։

Նույն ժողովի Զ կանոնում ավելի պարզ է արտահայտված.

«Ոմանք յուխտէ եկեղեցւոյ, զկարգ եւ զպաշտոն թողին ու զինուորութիւն ստացան։ Արդ, եթէ դառնան ի չար ճանապարհէն՝ օրհնեալ են ի տեառնէ և ընկեալք ի մէջ. ապա եթէ ոչ, իշխանութիւնն լիցի վարդապետին զշնորհս եկեղեցւոյ հանել յայսպիսացն և արժանավոր քահանայից և պաշտօնէից մերձաւորաց տալ...»[42]։

Ուշագրավ է այն, որ հայ եկեղեցու հայրերը նշում են, որ պարգևականի փոխակերպումը ժառանգականի (ֆեոդի) սահմանվել է բյուզանդական կայսր Հերակլի (610—641) և պարսից Խոսրով արքայի (591—628) թագավորության ժամանակ ու առաջարկում է եկեղեցական իշխանություններին՝ հողային վեճերը քննելիս ղեկավարվել վերոհիշյալ կանոնով։ Ուրեմն, պետք է ենթադրել, որ VII դարի առաջին կեսում ընդունվել է հատուկ որոշում պարգևականը ժառանգականի (ֆեոդի) փոխակերպելու մասին, որը մեզ չի հասել։ Համենայն դեպս Դվինի եկեղեցական ժողովը օրինականացնում է եկեղեցական պարգևական կալվածների փոխակերպումը ժառանգականի (ֆեոդի)։ Կասկած չկա, որ նույն պրոցեսը տեղի է ունեցել աշխարհական հողատերերի կալվածներում։ Եկեղեցին միշտ հետևել է պետական իշխանությունից բխող մղումին։

Այսպես ուրեմն, աղբյուրների մանրազնին քննությունից որոշակի կերպով պարզվում է, որ Պապ թագավորի բարեփոխությունների հետևանքով Հայաստանում ծագեց պարգևականը, որ ֆեոդալական հողային սեփականության նախնական, սաղմնային ձևն էր, իսկ Դվինի եկեղեցական հինգերորդ ժողովը օրինականացրեց պարգևականի կամ շնորհականի փոխակերպումը ֆեոդալականի (խոստակի, ձեռականի կամ ժառանգականի)։ Շուրջ երեք հարյուր տարիների ընթացքում, այսինքն՝ մեր թվականության IV դարի երկրորդ կեսից մինչև VII դարի առաջին կեսը, Հայաստանում (ինչպես և Պարսկաստա-

41 Տե՛ս «Կանոնագիրք հայոց», հրատ. Ա. Ղլտճյանի, Թիֆլիս, 1913, էջ 125։
42 Տե՛ս նույն տեղում, էջ 123։

նում ու Բյուզանդիայում[43]) տեղի է ունեցել ֆեոդալական հողային սեփականության, հետևաբար, ֆեոդալական արտադրանքակի ձևավորումը։ Ուրիշ կերպ ասած, մինչև արաբական արշավանքների սկիզբը ֆեոդալական հասարակության լինելության պրոցեսը Հայաստանում արդեն ավարտվել էր։ Պատմական այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանի տերիտորիայի վրա ձևավորվեցին մի շարք առանձին ֆեոդալական իշխանություններ, սկսվեց ֆեոդալական մասնատվածության շրջանը։ Մեր պատմիչները Հայաստանի պատմության փոխարեն իրենց աշխատություններում սկսեցին շարադրել առանձին իշխանությունների պատմությունը։

К ВОПРОСУ О ВОЗНИКНОВЕНИИ И УСТАНОВЛЕНИИ ФЕОДАЛЬНОЙ ЗЕМЕЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ В АРМЕНИИ

А. М. ДАНИЕЛЯН

(Резюме)

Исследование экономических отношений феодального общества предполагает выяснение вопроса о возникновении и установлении крупной феодальной земельной собственности.

На основе анализа данных первоисточников автор показывает, что «паргевакан» (пожалование, бенефиций, как условное и пожизненное владение) возник в Армении в результате земельной реформы царя Папа (369) и представлял собой зародышевую форму феодальной собственности. В течение V—VI вв. «паргевакан» получил широкое распространение во владениях крупных светских и церковных землевладельцев, превратившись в первой половине VII в. в наследственную феодальную собственность, что и было санкционировано Двинским собором (645). Автор приходит к заключению, что процесс преобразования рабовладельческой частной собственности в феодальную, начавшийся еще в IV в., завершается в VII в., сопровождаясь формированием на территории Армении отдельных феодальных княжеств.

---

43 *Ն. Ադոնցը Հուստինիանոսի անունով կոչում է «Այն ժամանակամիջոցը, որ սահմանադիր է հռոմեական և բյուզանդական պատմության դարաշրջանների միջև։ Դա անցման շրջան էր անտիկ պետականությունից դեպի միջնադարյանը» (Տե՛ս* Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ VII)։

Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այն, Ն. Ադոնցի ասելով, կազմում էր Բյուզանդիայի մի մասը (նույն տեղը, էջ X)։ Հետևաբար, նրա կողմից նշված պատմական դարաշրջանը Հայաստանի համար նույնպես անցման շրջան էր, հին ստրկատիրական հասարակարգից դեպի միջնադարը։ Ի դեպ, Ն. Ադոնցը բազմիցս նշում է, որ Խորենացու «Հայոց պատմությունը» նշանավորում է «անկման ժամանակաշրջան, երբ նախարարական կյանքի առաջվա հիմքերը խախտվել էին, պատմական կարգերը քայքայվելով անցնում էին հիշողությունների և ավանդությունների բնագավառը» (նույն տեղը, էջ 237)։